

ԿԱՆՈՒՅՆ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE

DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE

ST-GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF

ST. GREGORY THE ILLUMINATOR

ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 30 Սեպտեմբեր 2018


Գ. Կիրակի Չկնի Սրբոյ Խաչին / ԹԻԻ 78

Տօն ՎԱՐԱԳԱՅ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ

Dimanche 30 septembre 2018

3ème Dimanche après la Sainte Croix / NO. 78

Fête de la SAINTE CROIX de VARAK



Today's Bible Readings:

Galatians 6.14-18 / Matthew 24.30-36 /

Les lectures de la Bible d'aujourd'hui:

Galates 6: 14-18 | Matthieu 24: 30-36 |

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn.

Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan, Acolytes: Michael Arabian, Armen

Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Mr. Sarkis Barsemian

Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2


stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS



ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ 6.14-18

Բայց ես ամենեւին պիտի չպարծենամ, այլ միայն մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի խաչով. անով աշխարհը խաչուած է ինծի համար, ես ալ՝ աշխարհի: **15** Որովհետեւ Քրիստոս Յիսուսով ո՛չ թլփատութիւնը որեւէ ազդեցութիւն ունի, ո՛չ անթլփատութիւնը, հապա՝ նոր արարած ըլլալը: **16** Խաղաղութիւն ու ողորմութիւն բոլոր անոնց վրայ՝ որ այս կանոնին համաձայն կ'ընթանան, եւ Աստուծոյ Իսրայելին վրայ: **17** Ասկէ ետք ո՛չ մէկը թող անհանգստացնէ զիս. որովհետեւ ես մարմինիս վրայ կը կրեմ Տէր Յիսուսի վերքին սպիները: **18** Եղբայրներ, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ: Ամէն:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 24.30-36

30Եւ ա՛յն ատեն մարդու Որդիին նշանը պիտի երեւնայ երկինքի մէջ: Այն ատեն երկրի բոլոր տոհմերը պիտի հեծեծեն, ու պիտի տեսնեն մարդու Որդին՝ որ կու գայ երկինքի ամպերուն վրայ, զօրութեամբ ու մեծ փառքով: **31**Եւ ան պիտի դրկէ իր հրեշտակները բարձրաձայն փողով, ու պիտի հաւաքեն իր ընտրեալները չորս հովերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը»:

32«Թ՛գեմիէ՛ն սորվեցէք առակ մը. երբ անոր ոստերը կակուղնան եւ տերեւները ցցուին՝ կը հասկնաք թէ ամառը մօտ է: **33**Նո՛յնպէս դուք՝ երբ տեսնէք այս բոլոր բաները, գիտցէ՛ք թէ մօտ է՝ դռներուն քով: **34**Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. «Այս սերունդը պիտի չանցնի, մինչեւ որ այս բոլոր բաները ըլլան»: **35**Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնա՛ւ պիտի չանցնին»:

36«Իսկ այդ օրն ու ժամը՝ ո՛չ մէկ մարդ գիտէ, ո՛չ ալ երկինքի հրեշտակները, հապա՝ միայն իմ Հայրս:

Galatians 6. 14-18

14 But God forbid that I should glory, save in the cross of our Lord Jesus Christ, by whom the world is crucified unto me, and I unto the world. **15** For in Christ Jesus neither circumcision

availed any thing, nor uncircumcision, but a new creature. ¹⁶ And as many as walk according to this rule, peace be on them, and mercy, and upon the Israel of God. ¹⁷ From henceforth let no man trouble me: for I bear in my body the marks of the Lord Jesus. ¹⁸ Brethren, the grace of our Lord Jesus Christ be with your spirit. Amen.

Matthew 24.30-36

³⁰ And then shall appear the sign of the Son of man in heaven: and then shall all the tribes of the earth mourn, and they shall see the Son of man coming in the clouds of heaven with power and great glory. ³¹ And he shall send his angels with a great sound of a trumpet, and they shall gather together his elect from the four winds, from one end of heaven to the other. ³² Now learn a parable of the fig tree; When his branch is yet tender, and putteth forth leaves, ye know that summer is nigh: ³³ So likewise ye, when ye shall see all these things, know that it is near, even at the doors. ³⁴ Verily I say unto you, This generation shall not pass, till all these things be fulfilled. ³⁵ Heaven and earth shall pass away, but my words shall not pass away. ³⁶ But of that day and hour knowed no man, no, not the angels of heaven, but my Father only.





Հոգեւոր Հովիւի Օրուան Պատգամը

Իւրաքանչիւր տարի Սեպտեմբեր 25-ի մօտ Կիրակին , Հայոց

Առաքելական Ս. Եկեղեցւոյ սրբազան կամարներուն տակ կ'ոգեկոչենք օրուան յատուկ հոգեգմայլ շարականներով եւ աստուածաշնչական պատշաճ ընթերցումներով մեր Եկեղեցւոյ տօնացոյցին մէջ խաչի խորհուրդին նուիրուած տօներէն Վարագայ Սուրբ Խաչի տօնը:



Արդարեւ, տարուան ընթացքին երեք տարբեր առիթներով Հայոց Եկեղեցւոյ զաւակներս կը միացնենք, ի խորոց սրտի, հաւատքով եւ յոյսով արտասանուող մեր աղօթքներն ու հոգեպարար շարականները Քրիստոնէական եկեղեցիներու մեծ ընտանիքին: Առաջին հերթին՝ մտասէւեռելու խաչի խորհուրդին վրայ եւ ապա Խաչեալէն ստանալու իր պատգամները մեր ամենօրեայ կեանքը իմաստաւորելու համար, որպէսզի սպառազինուած անոր հոգեւոր զէնքերով՝ մենք եւս կարենանք հաստատակամ քալել Հայոց Պատմութեան խաչի արիւնոտ ճամբէն:

Հակիրճ անդրադառնալով այդ տօներուն՝ ժամանակագրական կարգով նշենք, որ Ընդհանրական Եկեղեցւոյ հետ նախ կը տօնենք Գիւտ Խաչի՝ Կոստանդին կայսրի մօր՝ Հեղինէի միջոցով 327 թուականին Գողգոթայի աղբիւսներուն մէջէն Քրիստոսի իրական խաչափայտին գտնուելուն յիշատակը: Ապա կը փառաբանենք Երուսաղէմի երկնակամարին վրայ՝ Գողգոթայի բարձունքէն մինչեւ Ձիթենեաց լեռ, Սուրբ Խաչին երեւման հրաշալի դէպքը: Վերջապէս, Խաչվերացի տօնին առիթով կը պանծացնենք 628 թուականին Քրիստոնէական աշխարհի սրբազնագոյն մասունքին՝ Քրիստոսի խաչին գերութենէն ազատագրումը եւ դարձեալ յաղթականօրէն Երուսաղէմ տարուելու պատմական մեծ եղելութիւնը:

Սակայն այս երեք տարբեր առիթներով կատարուող խաչի տօներէն անկախ, մեր Եկեղեցին կը նշէ նաեւ Վարագայ Սուրբ Խաչի տօնը: Այս տօնը իր մէջ խտացնելով կրօնական եւ ազգային կրկնակ իմաստներ՝ ունի զուտ Հայկական նկարագիր: Անոր ոգեկոչումը այսօր մեզ կ'առաջնորդէ մեր ժողովուրդի պատմութեան ամենէն տագնապալից շրջաններէն մէկը՝ եօթներորդ դարու կէսը, երբ Հայաստան աշխարհը

արդէն վերջնականօրէն ինկած էր Արաբներու լուծին տակ: Բայց այս տօնին կարեւորութիւնը աւելի լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է նախ հոգիի աչքերով փոխադրուիլ այն սրբավայրը՝ Վարագ լեռան կողերուն, ուրկէ ծնունդ առած է Հայկական խաչին այս տօնը:

Մեր քերթողահայրը՝ Մովսէս Խորենացին կը պատմէ, որ երբ Գայեանէն եւ իր ընկերուհիները Հռոմէական կայսրութեան սահմաններէն ներս Քրիստոնէաներուն դէմ մղուող հալածանքներէն խոյս տալով՝ եկան Հայաստան, անոնցմէ Հռիփսիմէ կոյսը իր վիզէն կախուած ունէր Քրիստոսի իրական խաչափայտէն մասունք մը, որ թրջուած էր Յիսուսի՝ խաչին վրայ թափուած փրկարար արիւնով:



Իրենց ուղեւորութեան ընթացքին, երբ այս կոյսերը կը գտնուէին Վանի մօտակայ շրջանը եւ կը պատրաստուէին մեկնիլ Հայաստանի մայրաքաղաքը՝ Վաղարշապատ, Հռիփսիմէն իր վիզէն հանելով այդ մասունքը՝ պահեց տեղ մը այդ լեռան վրայ, որպէսզի իրենց հասնելիք որեւէ չարիքի պարագային այդ մասունքը՝ չվտանգուէր: Երկու քահանաներ, որ կը ճգնէին այդ լեռան քարայրներուն մէջ, յանձն առին անոր պահպանութեան պարտականութիւնը:

Ինչպէս Հայոց Քրիստոնէութեան դարձի պատմութենէն ծանօթ է մեզի, Հայոց Տրդատ Արքային օրով Վաղարշապատի մէջ այդ կոյսերուն կը սպասէին եղերական պատահարներ, որոնք պատճառ հանդիսացան, որ անոնք ի վերջոյ կնքեն իրենց կեանքը նահատակի լուսապսակներով՝ ամուր կառչած մնալով իրենց Քրիստոնէական հաւատքին:

Յատկանշելի է, որ անոնց աճիւնները մինչեւ այսօր պահպանուած են Հռիփսիմէի եւ Գայեանէի անուան նուիրուած եկեղեցիներուն մէջ: Հետագային, երբ այդ քահանաները եւս վախճանեցան, Հռիփսիմէին աւանդ թողած մասունքին վայրը նաեւ մոռացութեան ենթարկուեցաւ եւ անհետ կորսուեցաւ:

Այսուհանդերձ, Վանայ շրջանի ժողովուրդին յիշողութեան մէջ անջնջելիօրէն վառ մնաց այն գիտակցութիւնը, թէ Վարագայ լեռան վրայ, անծանօթ վայրի մը մէջ կը գտնուէր Քրիստոսի իսկական խաչափայտէն կենարար մասնիկ մը: Ահա թէ ինչո՞ւ այս խաչի մասունքին սիրով այրող, անդիմադրելի հրապոյրով տեսլահար հոգիներուն համար Վարագայ լեռը

սերունդներ շարունակ դարձաւ երկիւղած պաշտամունքի առանձնարան եւ աղօթավայր: Ժամանակի ընթացքին այնտեղ շինուեցան ճգնաւորներու համար խրճիթներ, կառուցուեցան մատուռներ ու եկեղեցի, ուր սրբակրօն ու հաւատաւոր Հայ մենակեացներ ու վանականներ դարեր շարունակ ճգնեցան գիշեր ու ցերեկ, աղօթեցին եւ խոկացին՝ իրենց անթարթ աչքերը խաչի խորհուրդին սեւեռած:

Ահա նոյն այդ հաւատքին ամուր փարած երկու Հայ մենակեացներ՝ Թողիկ եւ Յովէլ, տարիներ առաջ հրաժարելով աշխարհէն, բարձրացած էին Վարագայ լեռ՝ շատ հաւանաբար հրապուրուած այդ լեռան գիրկը պահուած սրբազան գաղտնիքէն: Գաղտնիք, որ դարեր շարունակ անյայտ մնալէ ետք, անկասկած երջանիկ օր մը պիտի յայտնուէր՝ որպէս իմանալի լոյս, այն հոգիներուն, որոնք խաչեալին հասնելու տենչանքով տարիներ շարունակ կ'որոնէին Քրիստոսի իրական խաչափայտին այդ մասունքը:

Գիշեր մը, երբ Թողիկ ճգնաւոր եւ իր աշակերտը՝ Յովէլ կրկին Բարձրեալին առջեւ ծնրադրած կ'աղօթէին, հրաշալի տեսիլք մը իր լուսափայլ խորհուրդը պարզեց անոնց աչքերուն առջեւ ու անոնց հոգիները լեցուց երկնային այցելութեամբ... Այնտեղ՝ Վարագայ լեռան կատարին, ուր սեպածել ժայռերը կարծէք կը հասնէին երկնքի աստղերուն, տասներկու լուսեղէն սիւներու վրայ բարձրացող հոյատեսիլ տաճար մը կանգնած էր եւ անոր մէջտեղը կ'երեւէր լուսասփիւռ խաչ մը: Քիչ ետք ճառագայթող խաչի Ս. նշանը փոխադրուեցաւ ցած՝ Վարագայ վանքին եկեղեցւոյ խորանին վրայ: Տարիներ շարունակ աստուածային այս յայտնութեան ակնկալութեամբ աղօթող ու տազնապող Հայ ճգնաւորներուն միտքերը պայծառացան եւ անմիջապէս անդրադարձան, թէ վերջապէս Աստուած լսած է իրենց պաղատագին աղօթքները: Կատարուած էր անոնց առ Աստուած մատուցած թախանձագին խնդրանքը:

Ուստի, փութալով, կ'իջնեն իրենց ճգնարաններէն վար եւ կը մտնեն եկեղեցի, ուր, ո՛վ հրաշք, իրապէս կը գտնեն խաչափայտի մասունքը խորանին վրայ՝ ճիշդ այնտեղ, ուր լուսեղէն խաչը հանգչած էր:

Երկրպագելէ ետք այդ սուրբ նշանին, փառաբանելով զԱստուած, անոնք դուրս կու գան եկեղեցիէն՝ ուրիշներ եւս տեղեակ պահելու այս ցնձալի եղելութեան մասին: Հրաշալի այս լուրը, աստուածային յայտնութեան այս աւետիսը կը հասնի Վան քաղաք եւ յաջորդող տասներկու օրերու ընթացքին ժողովուրդը խումբ առ խումբ բարձրանալով Վարագայ լեռ՝ այնտեղ ականատես կ'ըլլայ տասներկու սիւներով զարդարուած տեսիլքին եւ երկիւղածութեամբ կը խոնարհի սուրբ մասունքին առջեւ: Այս հրաշալի դէպքին արձագանգը շուտով կը տարածուի Վասպուրական նահանգի

սահմաններէն անդին՝ առիթ ընծայելով համաժողովրդային աննախընթաց ոգեւորութեան եւ կրօնական ջերմեռանդութեան: Մօտիկ ու հեռաւոր գիւղերէն՝ շէներէն, ականներէն ու քաղաքներէն, հոգեւորական եւ աշխարհական, մեծահանդէս թափօրով ուխտի կու գան:

Վերջապէս, օրուան Հայոց Հայրապետ Ներսէս Գ. Շինող կաթողիկոսը, ընկերակցութեամբ երկրի սպարապետ Վարդ Ռշտունիի, իր շքախումբով կու գան դէպքին վայրը՝ Վարագայ վանք եւ անձամբ ստուգելէ ետք եղելութեան մանրամասնութիւնները, կը հաստատէ խաչափայտի մասունքին վաւերականութիւնը: Այդ առիթով կը կազմակերպէ յատուկ եկեղեցական հանդիսութիւն եւ հայրապետական իշխանութեամբ կը տնօրինէ, որ այնուհետեւ ամէն տարի մասնաւոր շուքով նշուի Ս. նշանի երեւման այդ օրը:

Իր ամփոփ գիծերուն մէջ ահա այս է Վարագայ խաչի տօնին կրօնական ենթահողը: Սակայն, երբ փորձենք այս հրաշապատում դէպքը քննել եւ արժեւորել եօթներորդ դարու կեսին Հայաստանի մէջ տիրող քաղաքական ծանր կացութեան եւ կրօնական դժուարին պայմաններու շրջագիծին մէջ, մեզի համար շատ ակնհայտ կը դառնայ, թէ ինչո՞ւ մեր ժողովուրդի կեանքին մէջ իւրայատուկ տեղ գրաւած է ան, եւ անոր ընծայուած է բացառիկ կարեւորութիւն:

Ներսէս կաթողիկոս, գործակցութեամբ Հայոց Սպարապետ Թեոթորոս Ռշտունիի հետ, առանց վիատելու, անմիջապէս լծուած էր երկրին ու ժողովուրդին արիւնոտ վերքերը դարմանելու սրբազան գործին: Ան իր առաջին նուիրական պարտականութիւնը կը համարէ Արաբներու ձեռքով Դուինի մէջ սպաննուած եւ տակաւին քաղաքին եւ դաշտերուն մէջ ցիր ու ցան անթաղ մնացած հազարաւոր նահատակներուն մարմինները հաւաքել տալ եւ զանոնք արժանացնել պատշաճ կրօնական արարողութեան եւ հաւաքական թաղման: Այնուհետեւ անոնց աճիւններուն վրայ կը կառուցէ վկայարան-տաճար մը՝ Ս. Սարգիս անունով:




Սակայն անոր անունը անմահացած է մեր եկեղեցւոյ եւ ճարտարապետութեան պատմութեան էջերուն՝ Վաղարշապատի մէջ շինել տուած Ս. Գրիգոր Լուսաւորչի անուան նուիրուած հոյակապ տաճարով: Առհասարակ «Չուարթնոց» անունով ծանօթ այս եռայարկ, երբեմնի շքեղ եկեղեցւոյ ակերակներն իսկ այսօր կը վկայեն Հայ ժողովուրդի Քրիստոնէական ժայռարմատ հաւատքին մասին՝ հանդիսանալով անոր

աստուածատենչ ու երկնասլաց մտքին ու հոգիին հզօր խոյանքին գեղեցկագոյն արտայայտութիւններէն մէկը:

Արդարեւ, ինչպէ՛ս կարելի է ըմբռնել փրկագործութեան խորհուրդը՝ առանց մեր նայուածքները սեւեռելու Գողգոթայի խաչէն անդին, խաչեալ Քրիստոսի դատարկ գերեզմանին, հրաշափառ յարութեան իրողութեան վրայ: Ինչպէ՛ս կարելի է կարդալ խաչին խորհուրդը՝ առանց մեր միտքն ու հոգին բանալու՝ անխառն սիրոյ, նուիրումի եւ յոյսի, անագորոյն մահուան վրայ տարուած յաղթանակի եւ փառապանծ յարութեան խորհրդանիշ՝ Աստուածորդւոյն լոյս պատգամներուն:

Սակայն մեր հայրերը հաստատելով Վարագայ Ս. խաչի երեւման՝ Հայու սեփական խաչի տօնը, նախ իրենք վերստին զրահուեցան խաչեալ եւ յարուցեալ Փրկչին կենսատու հաւատքով. վերստին պայծառացան աստուածաշունչ մատեաններէն աւետուող անվախճան ուրախութեամբ եւ երկնային իմաստութեամբ: Այնուհետեւ խաչի նշանը վերածեցին ամենօրեայ իրենց կեանքը ոռոգող, սնուցանող եւ պահպանող՝ անսահման սիրոյ, անսահման հաւատքի, անխորտակ կամքի եւ անսպառ ուժի աղբիւրի:

Վերջապէս, պէտք չէ վախնալ պայքարէն, ցաւէն, տառապանքէն եւ մանաւանդ՝ մարմնաւոր մահէն, որովհետեւ մեր Տիրոջ անժամանցելի պատգամն է. «Մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն, բայց չեն կրնար հոգին սպաննել» (Մատթ. Ժ. 28), որովհետեւ Գողգոթայի խաչելութենէն եւ խաւարման գիշերէն ետք է, որ միայն պիտի բացուի յարութեան լուսապայծառ եւ վարդափեղեղ առաւօտը:



Օրհնութեամբ՝

Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՂՕԹՔ ՄԻԱԾԻՆ ՈՐԴԻՒՆ



Դու՛ն, որ մեր տկար բնութեան փորձառութիւնը ունեցար, ո՛վ մեր Քահանայապետը՝ Յիսուս, քեզի՛ կը նայինք: Դու՛ն՝ որ մեզի համար մեղքի պատարագ եղար, որպէսզի մենք քեզի համար արդար ըլլանք:

Դու՛ն՝ որ մեզի համար երկրաւոր եղար, որպէսզի մենք քեզի համար երկնաւոր ըլլանք: Դու՛ն՝ որ մեզի համար Հաց եղար, որպէսզի մենք քեզ ճաշակելով սրբուինք:

Տո՛ւր վիշտերով լեցուն քու Մարմինդ, որպէսզի բոլոր սիրտերը քեզ ճաշակեն եւ սրբուին:

Մատռուակէ՛ վտակի պէս կաթկթող քու անմեղ Արիւնդ՝ որպէսզի մարդիկ անմեղութեամբ յազենան:

Երկարէ՛ փրկական խաչդ՝ այս աշխարհի ծովուն մէջ լողացողներու, մեզ վեր՝ դէպի քեզ բարձրացնելու համար:

Շնորհքի՛ կարօտ ենք, սփռէ՛, յոգնած ենք մեղանչելէ, քաւէ՛, խաւարի մէջ խարխափինք, ճառագայթէ՛. մեր հաւատքէն տապալած ենք, հաստատէ՛:

Դո՛ւն ես յոյսը, դո՛ւն ես լոյսը, դո՛ւն ես կեանքը, դո՛ւն ես քաւութիւնը, դուն ինքդ ես անմահութիւնը: Քեզի՛ կը սպասենք, քու շնորհքիդ կոթնածներս. քեզմէ՛ փրկութիւն ստանալու կարօտ ենք, քու Մարմինիդ միացածներս. քե՛զ իբրեւ քաւիչ քահանայ ունինք, մենք՝ քու Արիւնովդ գնուած հօտդ:

Նայէ՛ բոլորիս, սփոփէ՛ մեր տարակուսանքները քու փրկագործութեամբդ, հանդարտեցո՛ւր մեր խռովութիւնները քու խաղաղութեամբդ, հանգստացո՛ւր մեր յոգնած հոգիները քու օթեւաններուդ մէջ, ուր դուն գացիր, ո՛վ Տէր, եւ նոյնը մեզի խոստացար: Եւ արժանացո՛ւր մեզ՝ քեզի պատկանողներս, որ փառաւորենք քեզ, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին՝ յաւիտեանս.

Ամէն:





PRIÈRE AU FILS UNIQUE



Alors que le doute nous entoure de toute part, et que notre cœur est profané et que nous avons besoin d'être secourus, nous levons les yeux vers Toi, ô Grand Prêtre Jésus.

Toi qui as connu notre faible nature. Pour notre salut, Tu as porté le péché pour que nous devenions dignes de toi; Pour notre salut, Tu es devenu terrestre pour que nous devenions célestes. Pour notre salut, Tu es devenu pain pour que, ayant part à Toi, nous soyons sanctifiés.

Fais que ton Corps affligé soit une nourriture sanctifiante pour tous les cœurs. Déverse le courant de ton Sang en gouttes sans péché pour la joie d'une humanité sans péché. Descends l'ancre de ta Croix jusqu'à nous qui luttons dans la mer de ce monde et élève-nous jusqu'à Toi.

Nous n'avons pas répondu à ta grâce; garantis-nous. Nous n'avons pas bien accompli notre travail; pardonne-nous. Nous avançons à tâtons dans l'obscurité. Nous avons été négligents dans la foi; remets-nous sur le bon chemin.

Tu es l'espoir, Tu es la lumière, Tu es la vie, Tu es le Pardon lui-même. Tu es vraiment l'immortalité. Ceux qui ont mis leur confiance en Toi attendent ta grâce. Ceux qui se sont fondus dans ton Corps attendent de Toi avec impatience d'obtenir la rédemption. Tu es leur Prêtre rédempteur, qui a racheté son troupeau par son sang.

Regarde-nous tous. Quand nous sommes confrontés à l'incertitude, réconforte-nous au nom de ce que Tu as fait pour nous. Calme nos angoisses en nous donnant la paix. Accorde-nous le repos de nos labeurs dans tes demeures où Tu T'en es allé et que Tu nous as promises, ô Seigneur. Rends ceux qui T'appartiennent dignes de T'y glorifier toujours, avec le Père et le Saint Esprit, amen.



Հայաստանի Անկախութեան 27-Ամեակի Տօնակատարութեան Առիթով



**Յարգելի հաւատաւոր եւ բարեպաշտ
Հայորդիներ ,**

**ահաւասիկ նշեցինք եւ տօնախմբեցինք Հայաստանի Հանրապետութեան
Անկախութեան 27-Ամեայ բերկրալի տարեդարձը : Հազարամեակներու
պատմութիւն ունեցող եւ համաշխարհային քաղաքակրթութեան
անդաստանին մէջ իր ուրոյն տեղն ու դերը ունեցող մեր ժողովուրդը, սկսած
մեր Հայկ Նահապետէն, պայքարած է, մաքառած է անկախութեան հասնելու
համար:**

**Շատ բարդութիւններու ընդմէջէն անցած ենք եւ պիտի անցնինք, երբեք
չկորսնցնենք մեր յոյսը, երբեք չընկրկինք, երբեք չդաւաճանենք
անկախութեան համար զոհուած մեր մարտիկներուն, երբեք մեր ազգային
Նպատակները չուրանանք, այլ այս գաղափարներու եւ Նպատակներու
շուրջը միանանք ու անխոտոր երթանք յառաջ` դէպի մեր ազգային իղձերու
իրականացում: Շատերը տառապած են ու մաքառած անկախութիւն ձեռք
բերելու համար, սակայն քիչերն են ստացած այդ : Եւ այժմ աչքի լոյսի պէս
փայփայենք այս առանձնաշնորհումը:**

**Թող Ամենակալ Տէրն իր Սուրբ Աջի եւ Խաչի պահպանութեամբ օրհնէ,
զօրացնէ ու առաջնորդէ անկախացեալ իւրաքանչիւր Հայորդի ի Հայաստան,
յԱրցախ եւ ի սփիւռս աշխարհի :**

**Կը շնորհաւորենք բոլորիս ՀՀ Անկախութեան օրուան առթիւ: Մեր
միութեամբ, մեր հաւատքով, մեր սիրով պահպանենք եւ մեր սերունդներուն
փոխանցենք ամենաթանկը մեր ազգին համար` Անկախութիւնը:**

**Օրհնութեամբ`
Տէր Դաւիթ Քահանայ Մարգարեան**



Եկեղեցական Տոնացոյց Յառաջիկայ Շաբթուան
Feast de l'église pour la Semaine Prochaine

Յոկտեմբեր – Octobre

1, Երկուշաբթի - Տօն Սրբոցն Դաւթի Դըւնեցւոյն,
վկայիցն Ղամբէոսի եւ Ղամբէուհիւոյն:

**Lundi 1 – Fête de St David Devnézi,
des martyrs Lampéos et Lampétia.**

2, Երեքշաբթի - Տօն Սրբոցն Եւստաթէոսի եւ կնոջ
Նորա Թէոփիստեայ եւ երկուց որդւոցն,
կուսանացն՝ Երմոնեայ եւ Նեքտարիւնեայ:

**Mardi 2- Fête de St Eusdathès, de son épouse Théophisdia
et de leurs deux enfants, les vierges Ermonia et Nekdarinia.**

3, Չորեքշաբթի – Պահք:

Mercredi 3- Jeûne.

4, Յինգշաբթի - Տօն Սրբոց Իշխանացն
Սահակայ եւ Համազասպայ:

Jeudi 4 - Fête des Saints princes Sahak et Hamazasb.

5, Ուրբաթ - Պահք:

Vendredi 5 - Jeûne.

6, Շաբաթ – Տօն Սրբոցն 72 Աշակերտացն Քրիստոսի:

Samedi 6 – Fête des 72 Saints disciples du Christ.

SOLER

Շաբաթ, 29 Սեպտեմբեր 2018

Ս.Գեորգ Բաջամարտիկ Զորավարի, Ադոկտոսի ԵԼ Ռոմանոս Երզողի Յիշատակութեան Օր

Ս. Գեորգը Կապադովկիացի բարեպաշտ Քրիստոնեայ ընտանիքի զաւակ է: Զինուորագրուելով Զռոմեական բանակին՝ իր ցուցաբերած քաջութեան եւ հաւատարմութեան շնորհիւ կարճ ժամանակամիջոցին արժանացած է

հազարապետութեան պատիւին: Կայսրի կողմէ հրաւիրուած խորհրդակցութեան մը ժամանակ ընդդիմացած է Քրիստոնեաները հալածելու անոր ծրագրին՝ բացայայտելով իր Քրիստոնեայ ըլլալը: Կայսրը, զարմացած ու ապշած տեղի ունեցածէն, կը բանտարկէ սուրբը՝ ենթարկելով անլուր չարչարանքներու: Ս. Գեորգի քարոզներուն շնորհիւ շատերը դարձի եկած են, որոնց մէջ կը գտնուէր նաեւ՝ Ալեքսանդրիա թագուհին: Կախարդի մը կը պատուիրեն, որ երկու բաժակ դեղ պատրաստէ սուրբին դարձի բերելու համար: Առաջին բաժակը խմելէն յետոյ սուրբը պիտի մտքափոխուէր, իսկ երկրորդէն յետոյ՝ պիտի մեռներ: Բայց Գեորգը առ Աստուած ունեցած հաւատքին շնորհիւ կը խմէ երկու բաժակն ալ եւ ի զարմանք բոլորին՝ կենդանի կը մնայ: Ան նաեւ՝ յարութիւն կու տայ մեռեալի մը: Կայսրին բազմաթիւ թախանձանքներէն ետք, Գեորգը վերջապէս կը համաձայնի կուռքերուն զոհ մատուցանել: Սակայն ան հասնելով կռատուն մէկ առ մէկ կը ջարդէ բոլոր կուռքերը՝ ցոյց տալով անոնց սուտ եւ սին ըլլալը: Իր այս յանդուգն արարքին համար Դիոկղետիանոս կայսրը 303 թուականին գլխատել կու տայ զայն:



Ադոկտոսը կը նահատակուի 320 թուականին, Զայկական Մելիտենէ քաղաքին մէջ, Մաքսիմիանոսի ժամանակ: Պետական պաշտօնեայ եղած է Եփեսոսի մէջ: Ան չցանկալով իր աղջկան՝ Կալիսթենէին կնութեան տալ Զեթանոս կայսրին, անոր կը փախցնէ արեւելք: Քրիստոնեայ ըլլալուն պատճառով, կայսրին հրահանգով կը զրկուի կոչումէն եւ ունեցուածքէն եւ

կը վտարուի Մելիտենյէն: Տեղոյն կուսակալը չի յաջողիր Ադոկտոսին Յեթանոս դարձնել: Ան անսասան մնալով իր հաւատքին՝ կը գլխատուի: Սուրբին կինն ու միւս աղջիկը՝ Պելուպիան կը թաղեն զինք: Կոստանդիանոս կայսրին քոյրը՝ Կոստանցան, կը պաշտպանէ Կալիսթենէն, որ հօր մասունքները կը տեղափոխէ Եփեսոս, ուր հետագային սուրբի գերեզմանին վրայ մատուռ կը կառուցուի:

Ռոմանոս Երզիչը կը համարուի շարականներու կանոններու ստեղծողը: Եղած է սարկաւագ Կ. Պոլսոյ Ս. Սոփիա եկեղեցւոյ մէջ: Լաւ երգել եւ կարդալ չկարողանալուն պատճառով անարգուած է շատերու կողմէ: Ս. Աստուածածինը կը յայտնուի անոր երազին մէջ եւ կու տայ թղթագլան մը՝ հրամայելով ուտել, որմէ ետք, Ռոմանոսը կը ստանայ շարականներ գրելու եւ կատարելու բացառիկ շնորհք: Ան վախճանած է 556 թուականին:

Սուրբ Նշան վանք (Սեբաստիա)

(Նաեւ՝ Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան վանք)
Հայկական միջնադարեան
եկեղեցական համալիր:
Ըստ Արիստակէս
Լաստիվերացիի՝ վանքը
11-րդ դարուն կառուցած է
Վասպուրականի վերջին
թագաւոր Սէնեքերիմ-
Յովհաննէս Արծրունիի
որդին Ատոմը:



Սուրբ Նշան վանքին մէջ պահուած է Վարագավանքէն տեղափոխուած հարուստ մատենադարանը, Սէնեքերիմ-Յովհաննէսի գահը, Վարագայ Սուրբ Խաչը եւ այլ արժեքաւոր իրեր: 19-րդ դարու 2-րդ կեսին վանքին մէջ գործած է հոգեւոր դպրոց:



Holidays

Saturday, September 29, 2018


Commemoration of Sts. Gevorg the Captain, Adoktos and Romanos the Singer

St. Gevorg the Captain (St. George the Warrior) was from Cappadocia. He was born in a pious Christian family. Becoming a soldier of the Roman Army in a short period he deserves the honor of becoming Captain thanks to his courage and devotion. During the council convened by the Roman Emperor Dioklethianos he opposes to his plans on Christians' execution, and thus the fact that he is Christian, is revealed. The King, becoming surprised and astonished, orders to imprison the Captain and subjects him to severe torments. Many people, among them the Queen Alexandria, become Christians thanks to the preaching of St. George. A magician is ordered to prepare two kinds of remedies for trying the saint and changing his faith. By the first cup the saint should change his mind, and drinking the second cup, he should die. St. Gevorg drinks both cups, but thanks to the power of his faith towards God he remains alive. He also raises a man from the dead.

After the King's repeated requests St. Gevorg finally agrees to offer sacrifice to the idols. However, reaching the heathen church he breaks all idols one by one. For this act the King orders to behead St. Gevorg and he is martyred in about 303 A. D.

St. Adoktos (Adauctus) has been martyred in 320 A. D., in the Armenian Melitene, during the reign of Maximianos. He has been a state servant in Ephesus. Not willing to marry her daughter – Kalistene, with the Heathen King, he takes her away to the East. For being Christian upon the King's order, he is deprived of his title and property and is exiled to Melitene. The local governor also fails to convert Adoktos to the heathen religion. Remaining steadfast and unshaken in his faith, the saint is beheaded. His wife and the other daughter - Pelopia, bury him. Costantsa - sister of the Emperor Kostandianos, defends and protects Kalistene, he transfers the relics of his father to Ephesus, where a chapel is built over the saint's tomb of in the future.

St. Romanos the Singer (the Melodist) is considered to be the author and creator of the church hymns' canons. He has served as a deacon in the Church of St. Sophia, of Constantinople. Many people have mocked at him for his being unable to sing and read well. Once St. Mary appears to him in his dream and giving him



a paper roll, orders to eat it. After the dream Romanos is granted the virtue to create and sing church hymns and songs. St. Romanos passes away in 556 A. D.

Sunday, September 30, 2018

Feast of the Holy Cross of Varague

All Christian Churches each year solemnly celebrate all feasts dedicated to the Holy Cross. The Armenian Apostolic Church, in difference to the other Christian Churches, celebrates another purely national feast dedicated to the Holy Cross, which is famous as the Holy Cross of Varague.

The Armenian Church celebrates this feast two weeks after the Feast of Exaltation of the Holy Cross, that is - the Sunday during the period of September 25 - October 1.

According to the historian Agathangelos, St. Hripsime and her companions, running away from the Roman Emperor Dioklethianos, who started persecutions against Christians, reach to Armenia and find shelter in Vagaharshapat.

However, before reaching Vagharshapat they stop at the Mountain Varague, which is to the southeast from the Lake Van. Taking off from her neck the relic of the Lord's Wooden Cross, St. Hripsime gives it to the praying monks living on the mountain and asks them to preserve it in one of the caves. Thus, the sacred relic remains hidden till the seventh century.

In 653 A. D. the monk Todik and his disciple Hovel pray at the Mountain Varague and ask God to show the place of the relic. Suddenly 12 bright columns appear around the mountain and the sign of the Cross is seen among the columns. For 12 days the bright columns remain visible even from distant sites. This joyful news spreads everywhere.


Nerses the Creator Catholicos who was the Catholicos of All Armenians of that period, and Captain Vard, son the Knight Theodoros, learning about that miracle, go the Mountain Varague to personally witness it. With the support of the Armenian people the Pontiff builds a magnificent church, which in honor of the miracle is named Holy Cross Church. The Pontiff Nerses also writes the marvelous church hymn "By means of the most powerful sign", which is sung in the churches on the day of the feast. The sacred relic remains at the Mountain Varague till 1021 A. D. Later the Armenian King Senekerim Artsrouni brings the relic to Sebastia.

After the latter's death the relic is again transferred to its old place and remains there until 1651 A. D. when the relic is taken to Khoshab. In 1655 A. D. the relic is placed in the Church of Holy Godmother, in Van, which is renamed to Church of Holy Sign. The relic was preserved there till 1915 A. D.



ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 30 Սեպտեմբեր 2018



*Տ. եւ Տիկ. Ալեքսանտր եւ Նորա Ապուշարի
եւ զաւակներուն՝ Միշելի եւ Անթուանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ քրոջ եւ մօրաքրոջ՝*

ՍՕՆԻԱ

ՍԱՐԱՖԵԱՆ ՖԱԹԹԱԼԻ

(SONIA SARAFIAN FATTAL)


Մահուան 40-ին առիթով

(Սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)



ՆՈՒԻՐԱՏՈՒՆԻԹԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

*Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of September 2018 have been received with great
appreciation*



CHURCH:

**Mr. & Mrs. Emma & Berdj Essen \$100,
Mr. Vasken Dakessian \$50**

HOKEHANKISD:

**THE LATE SERPOUHI BALLIAN:
Mr. & Mrs. Krikor & Rose Dikranian,
Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian \$20**

**THE LATE ANGALATIAN FAMILY
Dr. & Mrs. Hrair & Manoush Derkevorkian \$100**





Տաղաւար Տօներ եւ Յառաջիկայ Ձեռնարկներու

**Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Յոկտեմբեր 27 եւ
28, 2018**

**Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 2 Դեկտեմբեր
2018**

**Մայր Եկեղեցւոյ Օծման 48-րդ Տարեդարձ –
Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018**

FEAST DAYS AND UPCOMING EVENTS

**Annual Bazaar – Saturday & Sunday -
October 27 & 28, 2018**

**Children's Christmas /CFFA –
Sunday, December 2nd, 2018**

**Church 48th Anniversary –
Sunday, December 9th, 2018**



**Ուշադրութիւն
մեր սիրելի
հաւատացեալներուն**



**Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի
կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները
փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066,
մեր հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Ծիսական Խորհուրդ

Attention to our beloved parishioners,

**If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.**

Thank you for your cooperation.

Parish Council



Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ

2018 Տարեշրջանի Տօնացոյց

Ամիս	Օր	Ձեռնարկ
Հոկտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պագար «Մարի Մանուկեան» սրահ
Նոյեմբեր	10, Շաբաթ	«Առնիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Տօնակատարութիւն «Մարի Մանուկեան» սրահ
	9, Կիրակի	Մայր Եկեղեցւոյ Օծման 48-րդ Տարեդարձ Տօնական Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ



Ս. Գրիգոր Լուսավորիչ
Մանկական Երաժշտական Խումբ



Jeunesse
Musicale St-Grégoire d'Outremont

**Փորձերը պիտի կատարուին Կիրակի օրերը
Վերսկաման թուականը կը հաղորենք մօտ առենեն:**

La nouvelle saison débutera

**La date du commencement des pratiques vous sera
communiquée prochainement.**

**Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ
հաստատել եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:**

**Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de
l'église.**

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նոթաները, միաժամանակ պիտի մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Յայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.



Հոգեւոր Հոովիւ եւ Ծխական Խորհուրդ

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/

Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -12 տարեկան երեխաներու համար

SUNDAY SCHOOL

For the ages of 6-12 years old children

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
 - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուաքներ եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Վերսկսման թուականը կը հաղորդենք մօտ
ատենէն:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Քինյ. Մարգարեան



In a pleasant and friendly atmosphere, the
children will learn:

- *Psalms & songs*
- *Armenian language skills*
- *Interesting stories & entertainments*
- *Fun & fascinating consecutive Fieldtrips*

Restart date will be announced shortly.

*For more information and registration call to the
Church office
(514) 279-3066*

Fr. David Margaryan



615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



«Կոմիտաս» Դպրաց Դասի
 Հիմնադրութեան 60-ամեակի
 Տօնակատարութիւն
 “Gomidass” Choir the 60th
 Anniversary Celebration



Հովանաւորութեամբ՝
 ԳԱՆԱՏԱՅԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
 ԳԵՐՇ. Տ. ԱՐԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ

Under the Auspices
BISHOP ABGAR HOVAGIMYAN

Կազմակերպութեամբ՝ / «ԿՈՄԻՏԱՍ» ԴՊՐԱՅ ԴԱՍԻ
Organized by: / “GOMIDAS” CHOIR



Մասնակցութեամբ՝ Հանրածանօթ Երգիչ
ՄԱՐԹԵՆ ԵՕՐԿԱՆՏԻ
 ԵՒ DJ SAKO-ի



With Participation: Famous Singer
MARTEN YORGANTZ & DJ SAKO

Շաբաթ, 10 Նոյեմբեր 2018 երեկոյեան ժամը
 8-ին, Եկեղեցւոյ
 «Մարի Մանուկեան» սրահին մէջ:
 Saturday, November 10, 2018 at 8:00 pm
 in the Church “Marie Manoogian” hall.

Ճաշերու Պատրաստութեամբ՝
 «Տիկնանց Յանձնախումբ»-ին

Supper Preparation: by “Ladies Committee”

Տոմսերու եւ տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել.

For reservation please call:

- Մարալ Պօղոսեանիս/ Maral Boghossian (514) 279-3066
- Արա Կերիքեանիս/ Ara Gerikyan (450) 682-5565 կամ / or
 (514) 947-4524 կ.ե. ժամը 5-էն ետք / After 5 pm

Սուղի Նուէր \ / Donation \$50

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
 Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ



Տ. ԴԱԿԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ

*BIBLE STUDY & INTERESTING
DISCUSSIONS*

BY FR. DAVID MARGARYAN

Տեղի պիտի ունենան Հինգշաբթի՝ Երեկոները
ժամը 7-ին Եկեղեցւոյ մէջ
Վերսկսման թուականը կը
հաղորդենք մօտ ատենէն:

Every Thursday at 7:00 pm at the
Church.

The restart date will be announced shortly.

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
մասնակից ըլլալու

Տ. Դակիթ Բինյ. Մարգարեանի՝
Ներկայացուցած Աստուածաշնչական Նիւթերուն:

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

We invite all our beloved faithful to be present
to the bible sessions with spectacular biblical
subjects that will be presented
by Fr. David Margaryan.

**Coffee and tea will be
served during the sessions.**

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին
Ներկայութիւնը:

Cordially we expect everyone's presence.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-
8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի
Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

Կազմակերպությունը՝

ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ



Տ Ա Ր Ե Կ Ա Ն

ՊԱԶԱՐ

Պատույ Հիւր՝

Ազնուափայլ Տիկին Արմինե Շիրինեան

**Շաբաթ 27 եւ Կիրակի 28 Հոկտեմբեր 2018
Ժամը 10:00-էն**

**Չեռային աշխատանքներ
Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք
Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն**

**Յաւելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել
Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 քիւի**



Յայտարարութիւն

Սիրելի հաւատացեալներ,

Կը տեղեկացնենք ձեզի թէ յետայսու

Ճիական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը,

Երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, առիթը պիտի ընծայուի մեր հաւատացեալներուն խորհրդակցական անդիպում մը ունենալու

Ճիական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները, որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

**Շնորհակալութեամբ՝
Ճիական Խորհուրդ
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ**